ՄԱԿ ՓԳՀ ԱՐՏԱԿԱՐԳ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ ԹԻՎ 1

ՀԱՅԱՍՏԱՆ

Սեպտեմբերի 30, 2023 թ.

Առանցքային տվյալներ.

100,480
փախստական է եկել Հայաստան

83,467
փախստական հաշվառվել է պետական մարմիններում

34,607
փախստականի ժամանակավոր կացարան է տրամադրել ՀՀ կառավարությունը

Ֆինանսավորում.

12.8 միլիոն ԱՄՆ դոլար
պահանջվում է 2023 թվականի, այդ թվում արտակարգ իրավիճակին արձագանքելու համար



3.7 միլիոն ԱՄՆ դոլար
Ստացված առ 2023 թ. սեպտեմբերի 18-ը

Իրավիճակի վերաբերյալ թարմ տվյալներ.

Ընդամենը մեկ շաբաթվա ընթացքում ավելի քան 100,000 փախստական է եկել Հայաստան, որոնք մուտք են գործել երկրի հարավում գտնվող Սյունիքի մարզով: 2023 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Հայաստանը հաղորդել է 2023 թ. սեպտեմբերի 23-ից վեր Հայաստան ժամանած 100,480 փախստականների մասին: Ցայսօր պետական մարմինները երկրի սահմանամերձ մարզերում տեղակայված գրանցման երկու կենտրոններում 83,467 փախստական են հաշվառել: Փախստականների մեծ մասը գալիս են իրենց սակավաթիվ անձնական իրերով եւ հրատապ օգնության կարիք ունեն, ներառյալ ծածկոցների, անկողնային պարագաների, բժշկական եւ հոգեբանասոցիալական աջակցության, ինչպես նաեւ շատ կարճ ժամկետում՝ կացարանի կարիք: Հայաստանյան իշխանությունները նոր ժամանած 34,607 փախստականի, որոնք երկրում հարազատներ չունեն, ժամանակավոր կացարաններ է տրամադրել, այդ թվում հյուրանոցներում, սոցիալական կենտրոններում եւ դպրոցներում: Այսուհանդերձ, հաշվի առնելով այս կարճ ժամանահատվածում ժամանողների մեծ թիվը, արտակարգ իրավիճակների լրացուցիչ կենտրոնների մեծ անհրաժեշտություն է զգացվում:
Կառավարությունը միջազգային եւ տեղական համայնքների հետ միասնաբար աշխատում է ժամանող անձանց առավել հրատապ կարիքների բավարարման ուղղությամբ:

Նոր ժամանած փախստական երեխաները սպասում են Գորիսի գրանցման կենտրոնում, Սյունիքի մարզ, սեպտեմբերի 29, 2023 թ.: © UNHCR/Karen Minasyan

Արձագանքում արտակարգ իրավիճակին

Փախստականների պաշտպանություն.

- ՄԱԿ ՓԳՀ-ն արտակարգ դրության սկզբից ի վեր իր ներկայությունն է ապահովել սահմանին, ժամանող փախստականներին տրամադրելով պաշտպանության հետ կապված խորհրդատվություն եւ տեղեկություններ:
- ՄԱԿ ՓԳՀ-ն տրամադրում է նաեւ տեխնիկական սարքավորումներ, այդ թվում դյուրակիր համակարգիչներ եւ պլանշետներ, փորձելով նպաստել պետական հաշվառման ու կարիքների գնահատման գործընթացին:
- ՄԱԿ ՓԳՀ-ն ընդլայնում է իր ներկայությունը գրանցակայաններում, որպեսզի տեղեկատվությամբ եւ խորհրդատվությամբ աջակցի նոր ժամանող փախստականներին:

Կացարան եւ առաջին անհրաժեշտության պարագաներ (ԱԱՊ)

- ՄԱԿ ՓԳՀ-ն ԱԱՊ, այդ թվում ծալովի մահճակալներ, անկողնային հավաքածուներ եւ ծածկոցներ է տրամադրում Գորիսի եւ Վայքի համայնքապետարաններին:
- Ակնկալվում է, որ առաջիկա օրերին պահուստները համալրելու նպատակով հերթական ապրանքախումբը կհասնի Հայաստան: Սեպտեմբերի 30-ին Երեւան էր հասել սարքավորումներով բեռնված առաջին բեռնատար մեքենան, որոնք կբաշխվեն տարբեր համայնքապետարանների:
- Առաջիկա օրերին եւս 15 բեռնատար կժամանի, որոնք բեռնված են ԱԱՊ-ով, ներառյալ ծածկոցներ, մահճակալներ, խոհանոցային հավաքածուներ եւ այլն, նախատեսված շուրջ 7,000 փախստականի համար:

Համակարգում

ՄԱԿ ՓԳՀ-ն ՄԱԿ գործակալությունների եւ մարդասիրական կազմակերպությունների հետ առաջնորդում է փախստականների կարիքներին արձագանքման միջգործակալական ջանքերը, աշխատելով ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի հետ: Փախստականների կարիքներին արձագանքման ծրագիրն ամփոփման փուլում է, որն իրականացվում է արձագանքման գործընթացում ներգրավված բոլոր մարդասիրական դերակատարների հետ համատեղ:
ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է դոնոր կառույցներին՝ աջակցության համար. Բելգիա | Կանադա | Դանիա | Ֆրանսիա | Գերմանիա | Իռլանդիա | Նիդեռլանդներ | Նորվեգիա | Շվեդիա | Շվեյցարիա| Միացյալ Թագավորություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մանրամասն տեղեկությունների համար կապ հաստատել. ՄԱԿ ՓԳՀ Հայաստան, armye@unhcr.org